կանն եթէ կամիք այս է. զի ի թաղման տեղւոջ տիրամօր կուսին յետ կոյս խորանին ունէին և յոյնք տեղի. և յաւուրս տօնախմբութեան գնային յուխտ, ընդ իւրեանս տանելով զխորանի զարդարանս։ Այլ ձանձրացեալք միշտ ի կրել զարդարանս նոյն խորանին, զամս երկուս այնպէս թողեալ են. և իբր ամրացուցեալք ի յորմունս։ Փաթերայքն ասացեալ են. ի վեր առէք զզարդս ձեր. և նոքա չեն անսացեալք։ Եւ ի չանսալն նոցին՝ ածեալ ընդ իւրեանս լատինք զարս ի դատաւորէն, քանդեալ կործանեալ, հիմնայատակ արարեալ են զզարդս նոցին զեկեղեցականս։ Անդէն ազգն յունաց սաստիկ վիրաւորեալք ի հոգի, ի ծածուկ ուխտս արարեալ են. և դարան գործեալ զի և յաւուրս տօնախմբութեան նոցին յարութեան, զայն ինչ արարեալ, որպէս և լուեալ իսկ էք։ Եւ յետ այսորիկ հրեշտակապետին զՖէրմանն խնդրէ։ Զայս եկեղեցիս ի 18 ամաց հետէ չինեալ էր գրիգոր վարդապետն. բայց առանց Ֆէրմանի. և ի տեսանելն զգիրն փաշային, թէ չէր Ֆէրման, այլ պոյրուլթու՝ ոչինչ համարէ զայն. և զեկեղեցին ի ձեռաց նոցա կամի յետս առնուլ. և զի՞նչ ասացից՝ և վասն այնր առնու քսակ 20. ի վախճանի յաւուրս իմ, յորս ես գտայ անդէն, 120 քսակ տուժանս ետուն հայք. նմանապէս և յոյնք ևս առաւել։ Երեկեան օրն զեկեղեցին պէշիքթաշու արքունի հրամանաւ հիմնայատակ արարին. որոյ աղագաւ ազգս մեր ի տառապանս գտանի այսօր։ Ողջ լեր ի տէր։

Քառայ ձեր և եղբայր Թովմաճանեան
Մահտեսի յոհաննէս

ՄԹ.

Զոյգ մը նամակներ՝ որոնք կը տեղեկագրեն Մուստաֆա Գ. ի սուլթանութեան օրերէն ինչ ինչ վայրագ կարգադրութիւններ, որուն մէկ յայտնի ապացոյցը կը տեսնուի մեր Բ. թուղթին մէջ՝ յանձին հելլէն կոյր նուագածուի մը։ Ա.ը կը ծանուցանէ Ցունաց կողմանէ կատարուած նոր գրաւումները Երուսաղեմի Սուրբ Տեղեաց մէջ։

Ա.

Ցարգոյապատիւ և գերապայծառ տնտեսն Ստեփանոսի
Վարդապետի և արքեպիսկոպոս խոնարհութեամբ ողջոյն

Այս Ծգերորդ գիր է

... Ցայս նուագ զօրացաւ յոյժ հրաման մեծի քաղաքիս ի վերայ հարկատուաց չզգենուլ փառաւորս, այլ գծուծս, և աղքատացի մինչև ցայսօր ժամանակի. զի և ինքն գոլով զատրզատելի իբրև զհայր իւր, այսինքն ճգնազգեաց ըստ օրինի իւրեանց, ոչ զգենու փառաւորս, և ոչ առնու բնաւ զընծայս, մանաւանդ թէ ցրուէ յիւրոցն, որպէս ասեն, և է անգաւակ. վասն այն դադարեալ է տուրևառութիւնն և սաստկանայ օրըստօրէ թանգութիւն ամենայն իրաց, ևս առաւել հացի, և այլ ուտելեաց, և հացն է սեաւ և փոքր և խառն ընդովք կորեկոյ և այլ իրաց և մոխրով. ուստի ըստ դաւթի զմոխիր որպէս զհաց ուտեմք առհասարակ։ Եւ գոհանամք զտեառնէ, զի լսեմք, եթէ յարևելից կողմանս ի տեղիս տեղիս ոչ գտանի և այն, զոր մեք ուտեմք վասն սաստկութեան սովուն։... Այլ վասն իրացն յունաց զինչ գրեցից, զի ոմանք ի մեծամեծաց նոցա կաշառս տուեալ վէզիրին զ600 քսակս դրամոյ՝ առաքեցին հրամանագիր յերուսաղէմ, և առին զտեղիս ինչ, որ էր ի ձեռս լատինացւոց ի ձորն գեթսեմանի, ի բեթղէհէմ, և ի սուրբ յարութիւնն։ Կարծեմ թէ վախճան սորա չար լինի յունաց ազգին ի փոփոխիլ մեծի քաղաքիս. թէպէտ այժմ ոչինչ խօսին ազգքն ֆռանգաց վասն իրացս այսոցիկ։ Ի սկիզբն տարւոյս ի 24 յունվ. ըստ նորոյն եկին հասին այսր չորեքին նաւքն դանեաց, այսինքն դանիմարքին,